ԹԵՄԱ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1.4 Քարտեզագրական, դաշտային արշավախմբային մեթոդներ

Գիտե՞ս որ...

... Մագելանը հաջողության չհասնելով պորտուգալական արքունիքում, 1517 թ. մեկնեց Իսպանիա, որտեղ 5 տարի տառապելուց հետո մեծ դժվարությամբ թագավորից ստացավ նավարկության համաձայնություն: Նա թագավորին ներկայացրել էր մի քարտեզ, որում Ամերիգո Վեսպուչիի հայտնագործած ցամաքը շրջանցող նեղուցը նշված է եղել մոտավորապես հրվ.լ. 40^0-ի վրա: Կարծիք կա, որ դա արվել է դիտավորյալ, թագավորին համոզելու նպատակով, որովհետև այդ ժամանակ քարտեզների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք, հարգանք կար: Հարկ է նշել, որ Մագելանը որևէ նեղուցի մասին չէր կարող իմանալ և նա այդ խորամանկությանը դիմել է ենթադրաբար: Այդ եզրահանգումը հաստատվում է նավարկության ժամանակ տեղի ունեցած դեպքերի համադրման արդյունքում: